

դով և սողալով եփված ապակու մեջ լրիվ սար-
ղացում դեռ տեղի չէր ունենում:

Համանման փորձեր կատարվել էին նաև կե-
րտսինի լաբորատորական վառարանում: Ապա-
կինները եփվում էին լիտրանոց և կես լիտրանոց
շամոտային տիգելներում: Այդ փորձերը հաս-
տատեցին երևանիտի բազայի վրա եփված ա-
պակու արագ պարզեցման մասին ստացված
արդյունքները: Դժբախտաբար, մենք հնարավո-
րություն չունեինք ստանալ քանակական բնու-
թյանը պարզեցման և համասեռացման արագու-
թյունը որոշելու համար: Սակայն ստացված
արդյունքները մեզ հնարավորություն են տալիս
ասելու, որ երևանիտի բազայի վրա ապակու եփ-
ման ժամանակը ղգալիորեն կրճատվում է բովա-
խառնուրդի լրիվ եռքի արագության մեծացման,
ապակու պարզեցման և համասեռացման շնոր-
հիվ: Մյուս կողմից, անհրաժեշտ է նշել ստացված
ապակու բացառիկ թափանցիկությունը, երբ 10—
15 սմ հաստության դեպքում ապակին գույնի տշ
մի երանգ չի ցուցաբերում:

Կերոսինի լաբորատորական վառարանում,
երևանիտի բազայի վրա եփվել են ապակու մի
քանի տեսակներ՝ կապարի բյուրեղապակի, բո-

րասիրիկատային ապակի, էլեկտրալամպային
ապակի և այլն, որոնք աչքի էին ընկնում բացա-
ռիկ մաքրությամբ և թափանցիկությամբ: Պետք
է նշել, որ տվյալ դեպքում ապակիների ներկման
միակ աղբյուրը շամոտային պտուտակներն էին,
որոնց մեջ Fe_2O_3 -ի պարունակությունը հասնում
էր մինչև 2%-ի: Նկատի ունենալով, որ երևանի-
տում նատրիումի օքսիդի պարունակությունը հա-
մեմատաբար բարձր է, եփվել է հետևյալ բաղա-
դրության կապարի բյուրեղապակի՝ SiO_2 — 67,2,
 PbO — 14,80, Na_2O — 9,5, K_2O — 7,10:


Մոտակա տարիներին երևանիտի արտադրու-
թյան առնչությամբ, մեր ռեսպուբլիկայում կա-
րևոր խնդիր է հանդիսանում տնային գործածու-
թյան ամանեղեն թողարկող գործարանի կազմա-
կերպումը: Այդ պատճառով արդեն ներկայումս
պետք է ջանքեր գործադրել երևանիտի բազայի
վրա տնային գործածության համար ապակիների
նոր բաղադրությունների մշակման համար:

Պետք է նշել, որ Հայաստանի ապակու ար-
դյունաբերության մեջ երևանիտը հաջողությամբ
կարող է փոխարինել սողային, որը ներմուծվում
է Սովետական Միության հեռավոր շրջաններից:

«ԱՐԱԳԱԾ» ԱՐՈՄԱՏԱՑՎԱԾ ՍԻԳԱՐԵՏՆԵՐ

Ընդարձակելով իր արտադրանքի ասորտիմեն-
տը, Երևանի ծխախոտի ֆաբրիկան ընթացիկ
տարվանից թողարկում է «Արագած» առաջին
տեսակի արոմատացված սիգարետներ:

Այդ սիգարետների պատրաստման ժամանակ
խառնուրդի ողջ 100%-ը կազմում են կմախքային
ծխախոտները (նրանց 50 %-ը, այդ թվում նաև բուլ-
դարականը և չինականը, ներմուծվող տեսակներ
են, իսկ 50 %-ը՝ հայրենական): Իսկ առաջին
տեսակի սովորական խառնուրդում օգտա-
գործվում է կմախքային ծխախոտների միայն
80 %-ը, իսկ 20%-ը կազմում են թանկարժեք ա-
նուշահոտ ծխախոտները: «Արագած» սիգարետ-
ներում անուշահոտ ծխախոտների փոխարինումը
կմախքայիններով, իջեցնում է տվյալ տեսակի
ինքնարժեքը, չափելով նրա որակի վրա:



Նկ. 1

«Արագած» սիգարետները ծխախոտային խառ-
նուրդը ենթարկվում է արոմատացման, այսինքն՝
ռեկտիֆիկատ-սպիրտից, մեղրից, կոմարինից,
վանիլինից, զիցերենից և ումի բնահյութից հա-
տուկ պատրաստված սուբստրատի միջոցով ա-
նուշահոտ է դարձվում, այնուհետև 24 ժամվա
ընթացքում պահվում է փակ արկղներում, որպես-

զի անուշահոտությունը տարածվի ծխախոտի
* ողջ զանգվածով:

Պատրաստի սիգարետները փաթեթների մեջ
դարսվում են պարաֆինացված միջնադիրով, որը
նպաստում է անուշահոտության պահպանմանը:

«Արագած» սիգարետները օժտված են բարձր
համի և անուշահոտության հատկություններով: